մարն է։ Մենք գիտենք, որ մի ծանր աշխատանք ունենք կատարելու, որովհետև մեր համաքաղաքացիների մեծ մասը դեռ կասկածում է այս ձեռնարկության աջողությունը վրա, իսկ շատերն էլ տենչում են, որ մենք աջողություն չունենանք, որովհետև այլապես նրանք սեպերես դուրս կը գան։ Մենք ամեն ջանք գործ կը դնենք ի դերև հանելու նրանց այդ ակնկալությունը։ Մենք գիտենք, որ ժողովրդի մեծագույն մասը հետևում է մեր աշխատանքին այն լի յոյսով, թէ մենք անշուշտ բարեբաստության սկիզբը կը դնենք։ Մենք ներկայացնում ենք ճշմարտությունը, արդարադատությունը, մարդկությունը, խաղաղությունը և ազգերի բարբորությունը։ Մենք հաստատի ենք, որ մեր գաղափարները կը յաղթահարեն նույն իսկ նրանց, որոնք այսօր դեռ դուրս են գրամ։ Դեռևս այս ՀՈՒՆԱԿԼԻՔ։ Շնորհակալություն մեր ՀԷՂՅԱՐՅԱՑԻ բարեկամներին, որոնք մեզ հնարաւորություն և առիթ են տուել իրար գտնելու։ Ցառաջ. դէպի գործ»։

Համագումարի այս առաջին նիստից յետոյ կատարվել է երկու երկիրների համար համագումարի վերջնական բիւրոների ընտրությունը։ Ցրանսիական բիւրոյի համար նախագահ է ընտրվել Էտուարդ ՁԷԿՕՆՍՈՆը և փոխնախագահներ՝ Գասսոն Մենիէն և Ժ. Ժօրէսը, իսկ գերմանական համար նախագահ՝ Հալէն (սոցիալիստ) և փոխնախագահներ՝ Հաուսմանը (բարիկալ) և Ռիկլին (կաթոլիկ), որ էլզաս-Լոթարինգիայի խորհրդարանի նախագահն է։ Բացի այդ, երկու կողմի պատգամաւորներից ընտրվել է մի կոմիսիա՝ խմբագրելու համագումարի բանաձևերը։

Ժ ը ն է վ Ա. Զ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴ

Քանիցս ես դիմել եմ իմ սիրելի ընթերցողներիս կոչով, և կոչս միշտ գտել է արձագանք նրանց ազնիւ և փափուկ սրտերում։

Նուիրական մի կոչ ունեմ անելու այսօր, և հաւատացած եմ, որ նա ևս կը գտնէ արձագանք բոլոր հայ սրտերում...

Բոլոր հայ սրտերում, անխտիր...

Լեզուն է, որ պահպանում է ազգը կորստից։

Լեզուն պահպանողը՝ դպրոցն է։ Ոչ գիմնազիան և ոչ համալսարանը, ուր մանում են միայն բաղաւորները, հարուստները, անհատները և որտեղից գալիս են ուսեալ մոռացած մայրենի դեղցիկ բարբառը։

Լեզուն պահպանողը մեր եկեղեցական դպրոցներն են, մեր ազգային եկեղեցական դպրոցները, որ միայն, ամուր հիմք են մեր ազգի գոյությանը...

Լինե՞լ թէ չը լինել։ Պահպանե՞լ լեզուն, ազգությունը, թէ՞ կորցնել, կորչել...

Ահա մի ահարկու հարց՝ դրված այսօր մեր առաջ։

Լինել, այո, լինել և պահպանել, պահպանել անխախտ, անսասան, անփոխոր...

Ուրիշ ինչ պատասխան պիտի սպասք մեզանից։

Լինել և պահպանել...

Մթթէ լեզուով, խօսքով և ոչ գործով։

Միայն գործով, միայն գործով, և այդ գործն է՝

Դպրոցական ֆոնդը, մի դրամալուսիս, որ պիտի պահէ, ապահովացնէ մեր եկեղեցական դպրոցները...

Ստացված է թոյլատրություն հանգանակություն անելու։ Ուրեմն բոլոր բանը մեզանից է կախված։

Բայց այդ հանգանակությունը դատարան չէ մի ծաղրալի աղքատի թաքանա։

Պէտք է միլիոն, միլիոններ, այո, միլիոններ։ և եթէ մենք բոլորս ձեռք-ձեռքի տուած նուիրվենք այդ վեհ, սուրբ և մեծ գործին, մենք կը ժողովենք այդ միլիոնները։

Գործենք միասին, հաւատով, յոյսով, անձնուէր, մոռացած՝ բոլոր մեծ և փոքր մեր առօրեայ հաշիւները։

Հարուստները թող տան՝ ինչքան կարող են, ինչքան կարելի է շատ, հաստատ վստահանալով որ նրանց զոհողությունները փոխ-կելու են մեր ազգը։

Բայց այս հանգանակությունը պիտի ուղենայ ընդհանուր ազգային բնաւորություն։

Պիտի տան բոլոր հայերը, ամեն մի հայ՝ ով ինչքան կարող է, գուցէ 10 կոպէկ։

Տան հարյուր թէ տասն կոպէկ, թող ամեն նուէր լինի մեզ համար ընդունելի։

Այդպէս միայն կարող ենք ժողովել միլիոն։

Ազնիւ, բանիմաց մարդիկ թող գլուխ կանգնեն այս մեծ գործին։

Անձնական պատիւ, վերաւորանք, թող լանեն այդ սուրբ մաքերը։

Մեծ մանկան սուրբ սրտերի առաջ սիրով, ակնածությամբ միանանք, միացեալ գործենք, գործենք եռանդուն, յամառ, ժամանակ չը կորցնելով։

Այդ մեծ մանուկը՝ մեր ազգային դպրոցական ֆոնդն է։

Նա պիտի պահէ մեր ազգությունը կորստից։

Մեծ դեր կարող է խաղալ այս գործում մեր հոգևորականությունը։ Պէտք է որ մեծ, առաջնորդները գլուխ կանգնեն գործին, շրջին իրանց թեմերը, այցելեն ամենուրդ և ունևոր հայերին և յորդորեն առատաձեռնությունը։

Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի սրբազան առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի հետ այցելեցինք 20—25 տներ և ցուցակ անցրինք 20,000 ռուբլի։

Նոր-Նախիջևանը թող լինի օրինակ Թիֆլիսին, Բաքուին և ուրիշ քաղաքներին։

Նոր-Նախիջևանում կայ 10,000 հայ բնակիչ։

Թիֆլիսում 125,000 հայ բնակիչ։

Եթէ Նոր-Նախիջևանը տայ 40,000 ռ., ինչու Թիֆլիսը տալու չէ 3—400,000-ներ։

Դա դժուար չէ։ Դա իրագործելի է։ Միայն... միայն պէտք են գործիչներ, եռանդուն, անձնուէր գործիչներ, որ պատանի ոգի քաղաքը՝ և հարուստի պալատը, և աղքատի խրճիթը։

Տան հազար թէ տասն կոպէկ. ահա ինչ պիտի լինի մեր նշանաբանը։

Ամեն մէկից ստանալ ինչքան կարելի է շատ։

Թող դա լինի զոհ մեր բոլորի կողմից. մեթէ այդ մեծ մանուկը, որի որբանի առաջ մենք կանգնած ենք այսօր, չարժէ մեծ զոհերի...

Լեզուն պահպանում է ազգը։

Լեզուն պահպանողը՝ դպրոցն է։

Եկէք, բոլորս ձեռք-ձեռքի բռնած, աշխատանք այսօր միասին, սիրով, հաւատով իրագործել մեր երազած, մեր սիրած դպրոցական ֆոնդը...

Տան հազար թէ տասն կոպէկ, թող լինեն հաւասար ընդունելի այս մեծ գործում։

Ա՞խ, ինչպես կը ցանկայի այսօր տարքացնել մեր բոլոր սառած, չարացած սրտերը և շարժել բոլորի մէջ գութ, գութ դէպի մեզ, դէպի մեր սերունդը, դէպի մեր ապագան, դէպի հայութիւնը, որ նուաղում է, քշանում է և չքանում առանց դպրոցների...

Գր. Զարմուշեան

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Երէկ, մայիսի 22-ին, սենատոր Է. Վատատելի նախագահությամբ կայացաւ սառցարանական համագումարի կազմակերպիչ բիւրոյի առաջին նիստը։

Ա. Քալանթար զեկուցեց այն նախնական աշխատանքների մասին, որոնք կատարված են մինչև այժմ, և այն հարցերի մասին, որոնք սպասում են իրանց քննության և լուծման։

Ինժեներ Մ. Վասիլիեվ ծանօթացրեց երկաթուղու վարչության ձեռնարկած ուսումնասիրական գործի հետ։

Ա. Խատիսեան յայտնեց, որ Թիֆլիս քաղաքի ինքնավարությունը յանձն կառնի ժողովել նրան Թիֆլիսի սպառողական ոյժի մասին։

Բիւրոն որոշեց ջանք գործ դնել մինչև աշուն հրատարակել էական նշանակություն ունեցող մի քանի հիմնական զեկուցումներ, վերարտադրել մթերքների վիճակագրության և կովկասում գոյություն ունեցող սառցարանների նկարագրությունը։

Համագումարը տեղի կունենայ դեկտեմբերի կէսին։ Համագումարի ժամանակ կը կազմվի սառցարանական մեքենաների մի փոքրիկ ցուցանդակ՝ ծանօթացնելու հասարակությանը այդ մեքենաների հետ։

Ծախք կը պահանջվի համագումարի և ցուցանդակի համար մօտ 10,000 ռ., որը կը հոգան Թիֆլիսի և Բաքուի քաղ. ինքնավարությունները, փոխարքայի գիւանատունը, երկրագործության և առևտրի մինիստրությունները, այլ և ուրիշ հիմնարկությունները։

Կազմակերպիչ բիւրոյի լիակատար նիստը նշանակված է կիրակի, մայիսի 26-ին, երեկոյեան, Կովկասեան Գիւղատնտեսական Ընկ. դահլիճում ժամը 8-ին։

Ն—ն

ԵՐԵԿՈՅԹ ՍԱՑԱԹ-ՆՈՎԱՑԻ ԵՒՇԱՏԱԿԻՆ

Այս երեկոյթը, որ կայանալու է ամսիս 25-ին, պէտք է համարել երկրորդ և վերջին Աշուղ-Հաղրի խումբը այս անգամ աւելի հոխ կերպով է պատրաստված և երգելու է Սայաթ-Նովայի երգերից հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով, իրանց հարազատ հին եղանակներով։ Մենք հաւատացած ենք, որ ժողովարանի դահլիճը այս անգամ էլ լիքը կը լինի, որովհետև Թիֆլիսում կայ հասարակության որոշ մաս, որ հետաքրքրվում է սեփական ստեղծագործություններով ու մօտվելերով և որի համար թանկ է ամեն բան, ինչ որ վերաբերում է հայրենի անցեալին։

Սակայն ունենք և մի ինչ-որ նոր հասանքի դատարկություն, որի աչքում այդ բոլորը mauvais ton է համարվում և որի նրբազգաստ նուրբ լսելիքը չէ կարողանում տանել ասիական վայրենի երաժշտությունը։ Այդ դատարկությունը բացակայում էր առաջին երեկոյթին, անկասկած բացակայելու է և երկրորդին։ Մեր խօսքը նրանց չէ վերաբերում։

Մենք ուրախ ենք, երբ տեսնում ենք մեր հնաելիզենա գաղափարը նոր-նոր ոգևորված, որ ոչ միայն մեր ժողովուրդը գիտէ ոգևորվել մեր աշուղների ստեղծագործություններով։ Այս երկրորդ և վերջին երեկոյթը կազմված է հէնց նրանց ցանկությամբ, ուստի հաւանական է սիրով կընդունի մեր հնարքի աշուղներին և կը վարձատրի քաջալերանքով։

Գ. Բ.